American University *of* Armenia
Հայաստանի Ամերիկյան Համալսարան

A US-accredited institution affiliated with the University of California

ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
պարոն Դավիթ Հարությունյանին

12.07.2016թ.

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի լրումն մեր՝ 14.06.2016թ. նամակի, որում հայտնել ենք ԱՃԹՆ Բազմաշահագրգիռ կողմերի խմբում քաղաքացիական հասարակության կողմից ընտրված ներկայացուցիչների անունները, տեղեկացնում ենք, որ տեղի է ունեցել մեկ անդամի փոփոխություն, որի համաձայն Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ Արթուր Ղազարյանին փոխարինելու է Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիայի համանախագահ Էրիկ Գրիգորյանը:

Խնդրում ենք հաստատված համարել Բազմաշահագրգիռ կողմերի խմբում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետևյալ կազմը.

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ.

- **Սոնա Այվազյան**, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն
- **Արթուր Գրիգորյան**, Էկոիրավունք ՀԿ-ի նախագահ
- **Էրիկ Գրիգորյան,** Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա
- **Ինգա Զարաֆյան**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ

Գիտական հաստատության ներկայացուցիչ.

- **Հարություն Մովսիսյան**, Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

Հարգանքով՝

Ալեն Ամիրխանյան
Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու
հանքարդյունաբերության կենտրոնի տնօրեն

096/19610
«14» 07 2016

40 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Phone: (+374 60) 69 40 40
(+374 10) 32 40 40
Fax: (+374 60) 61 25 12
E-mail: info@aua.am

U.S. Office
300 Lakeside Drive, Suite 700
Oakland, California 94612
Phone: +1(510) 987-9452
Fax: +1(510) 208-3576

Facebook: AUArmenia
Twitter: AUAnewsroom
Youtube: AUAuploads
Website: aua.am

The American University of Armenia is accredited by the WASC Senior College and University Commission, 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, 510.748.9001.

ԲԱԶՄԱՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՇԱՀԱԳՐԳԻՌ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ

Հուլիսի 12, 2016 | Հայաստանիամերիկյանհամալսարան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանդիպմանը ներկա էին.

- **Արթուր Գրիգորյան** | Էկոիրավունք ՀԿ
- **Արթուր Համբարձումյան** | Civil Voice ՀԿ
- **Բաբկեն Հարությունյան** | Civil Voice ՀԿ
- **Սոնա Այվազյան** | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- **Էրիկ Գրիգորյան** | Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա
- **Վալենտինա Գևորգյան** | Հայաստանի ամերիկյան համալսարան, Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն
- **ԼենաՆազարյան** | Հայաստանի ամերիկյան համալսարան, Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Քննարկվեց՝

ԲՇԽ մարզային քվոտայով ընտրված Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ Արթուր Ղազարյանի՝ խմբից դուրս գալու որոշումից հետո նոր ընտրական գործընթաց նախաձեռնելու, թե՞ ս.թ. հունիսին տեղի ունեցած էլեկտրոնային քվեարկության արդյունքում առավել շատ ձայներ հավաքած հաջորդ թեկնածուին ընդգրկելու հարցը:

Որոշվեց՝

Հաշվի առնելով, որ մարզային քվոտան սահմանվել և ապահովվել է նախորդ ընտրական ցիկլի ընթացքում, իսկ նոր ընտրական գործընթաց սկսելու համար պետք է զրոյական կետից մշակել և կազմակերպել ամբողջ գործընթացը՝ ներկա գտնվողների մեծամասնությունը համաձայնվեց, որ նոր ընտրական գործընթացի նախաձեռնումը նպատակահարմար չէ: Առավել նպատակահարմար, արդարացի և նաև իրավական տեսանկյունից ճիշտ է, եթե ԲՇԽ-ի ինքնաբացարկ հայտնած անդամի փոխարեն նրա տեղը զբաղեցնի ընտրության ժամանակ առավել շատ ձայներ հավաքած հաջորդ թեկնածուն, ով Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիայի համանախագահ էրիկ Գրիգորյանն է:

Հաջորդ հանդիպման օրակարգը բազմաշահագրգիռ կողմերի քաղաքացիական շահագրգիռ հասարակության անդամների ներքին աշխատակարգին վերաբերող հարցերի քննարկումն է: